# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 16-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիր՝ «ԷԱՃԱՊՁԲ-2025/15-6-ԵՊԲՀ»

«Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների աշխատանքների կազմակերպման նպատակով քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2025/15-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի մայիսի 14-ին ժամը՝ **10:44-ին** ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2025 թվականի մայիսի 16-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N1: Հարգելի գործընկեր, խնդրում եմ պարզաբանել ինչ նպատակով է տեխնիկական բնութագրերում տեղ գտել հետևյալ պայմանը՝ "Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է՝ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: Նշված երաշխիքային նամակով արտադրողը երաշխավորում է մատակարարի կողմից Հայաստանի Հանրապետություն մատակարարվող ապրանքը, ընդ որում ապրանքն արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի երաշխիքային նամակում հստակ պետք է երևա՝ մատակարարի, մատակարարվող ապրանքի անվանումները և երկրի անվանումը որտեղ նշված մատակարարի կողմից վաճառվող ապրանքը երաշխավորվում է արտադրողի կողմից", արդյոք չեք տեսնում նման պահանջի մեջ կոռուպցիոն ռիսկեր և արդյոք չի տանում տվյալ պահանջը դեպի մեկ մատակարարաի, խաթարելով բոլոր այլ մատակարարների հնարավոր մասնակցությունը, ինչի արդյունքում ել անիմաստ դարձնելով գնման գործընթացի բուն նպատակը՝ ձեռք բերել միևնույն ապրանքը ավելի մատչելի գնով, և ավելորդ չվատնել հարկատուների կողմից մուծված հարկերը:**

Պարզաբանում N 1: Հարգելի հնարավոր մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում ենք հետևյալը՝

Եթե ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետը Ձեր կողմից դիտարկվում է որպես կոռուպցիոն ռիսկ և հարկատուների կողմից մուծված հարկերի վատնում, ապա նշենք, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝Օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝4) գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման կարգը:

Հրավերի տեխնիկական բնութագրով՝ "Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է՝ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» պայմանը սահմանելու իրավական հիմք է հանդիսանում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գնման առարկայի որակին և անվտանգությանը վերաբերվող հատկանիշների բնութագրով հստակ նկարագրելու Պատվիրատուի իրավունքը, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետով սահմանված՝ պայմանագրի կատարման փուլում ապրանքն

արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի ներկայացման պայման սահմանելու Պատվիրատուի իրավունքը:

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության **որակին,** ստանդարտին, **անվտանգությանը**, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի համաձայն՝

Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում.

Նշենք, որ ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաներն են լաբորատոր ախտորոշման համար նախատեսված քիմիական նյութերը և պարագաները:

Բացի այդ,

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ 1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

Նույն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ

1. Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան որակյալ և օգտագործման համար անվտանգ ապրանքների գնման նպատակով գնորդը ինքնուրույն է որոշում և համապատասխանաբար կազմում իր կարիքների համար

անհրաժեշտ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ պահպանելով գնումների օրենսդրության պահանջները:

2. Ապրանքների գնման դեպքում, պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի ներկայացման պահանջի կիրառման իրավունքը սահմանված է գնումների օրենսդրությամբ և չի կրում որևէ կոռուպցիոն ռիսկ:
3. Տվյալ պահանջը երաշխավորում է ապրանքի Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված որակը և անվտանգությունը՝ անկախ այն հանգամանքից թե ում արտադրանքն է հանդիսանում տվյալ ապրանքը, քանի որ գտնում ենք, որ տվյալ պարագայում արտադրողը կարող է երաշխավորել ապրանքի որակը և անվտանգությունը՝ ապրանքի համապատասխան պահպանման, տեղափոխման և այլ պարտադիր գործողությունների կատարման դեպքում:
4. Որևէ ապրանքի կամ ապրանքների արտադրողի կամ արտադրողների կողմից ՀՀ տարածքում մեկ կամ մի քանի ներկայացուցիչ ունենալը գնումների օրենսդրությամբ չի սահմանափակում հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման ընթացակարգերին: Հնարավոր մասնակիցը այն մասնակիցն է՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ով կարող է բավարարել ընթացակարգի հրավերի նվազագույն պահանջներին, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքը արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակ ներկայացնելու պահանջը հանդիսանում է ընթացակարգի հրավերի պահանջներից մեկը:
5. Որևէ ապրանքի կամ ապրանքների արտադրողի կամ արտադրողների կողմից ՀՀ տարածքում մեկ ներկայացուցիչ ունենալը փաստը գնումների օրենսդրությամբ չի սահմանափակում այդ ապրանքի կամ ապրանքների անվտանգ շահագործումից օգտվելու Պատվիրատուի իրավունքը:
6. Հրավերով սահմանված է նաև, որ ապրանքների գնման դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Մերի Կարապետյանին: Հեռախոս՝ 011 621 000 (249)

Էլ.փոստ՝ marketinysmu5@gmail.com

«ԷԱՃԱՊՁԲ-2025/15-6-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Հակոբյան

Անդամներ՝ _____ Կ.Մկրտչյան

_____ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ _____ Մ.Կարապետյան

ОБЪЯВЛЕНИЕ

о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением оценочной комиссии № 2 от 16 мая 2025 года и публикуется в соответствии со статьей 29 Закона РА «О закупках».

Код процедуры: «ԷԱՃԱՊՁԲ-2025/15-6-ԵՊԲՀ»

Оценочная комиссия процедуры закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/15-6-ԵՊԲՀ», организованной в целях организации работ больничных комплексов «Гераци» № 1 и «Мурацан» фондом «Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци» с целью приобретения химических веществ, представляет ниже запрос, полученный от14 мая 2025 года в 10:44, и разъяснение, предоставленное 16 мая 2025 года относительно приглашения под тем же кодом:

**Вопрос № 1:** Уважаемый коллега, прошу разъяснить, с какой целью в технических характеристиках был включён следующий пункт:
"Обязательным условием является то, что участник на этапе исполнения договора предоставляет гарантийное письмо от производителя товара или его представителя. В указанном гарантийном письме производитель должен подтвердить, что поставляемый участником товар в Республику Армения действительно производится (или поставляется) им, при этом в письме должны быть чётко указаны: наименование поставщика, наименование поставляемого товара и страна, в которой поставляемый товар от указанного поставщика гарантируется производителем."

Не считаете ли вы, что подобное требование содержит коррупционные риски, и не ведёт ли оно к ограничению участия в закупке только одного поставщика, тем самым нарушая принципы конкуренции и исключая возможность участия других поставщиков? В результате чего теряется основной смысл закупочной процедуры — приобретение одного и того же товара по более доступной цене, без нецелевого расходования налоговых средств, поступающих от налогоплательщиков.

Разъяснение№1:
Уважаемый потенциальный участник, в ответ на Ваш запрос сообщаем следующее: Если пункт 21 Порядка организации закупочного процесса, утверждённого постановлением Правительства Республики Армения № 526-Н, рассматривается Вами как коррупционный риск и как нецелевое расходование налогов, уплаченных налогоплательщиками, то отмечаем, что в соответствии с пунктом 4 части 1 статьи 5 Закона, в целях обеспечения выполнения целей и требований Закона, Правительство Республики Армения утверждает:

4) порядок планирования закупок, утверждения характеристик предмета закупки, предварительного контроля закупок, исполнения, управления и финансирования договоров.

В соответствии с техническим заданием приглашения, условие о том, что «обязательным является предоставление участником на этапе исполнения договора гарантийного письма от производителя товара или его официального представителя», имеет правовое основание, вытекающее из:
— части 3 статьи 13 Закона, предоставляющей Заказчику право чётко описывать характеристики, касающиеся качества и безопасности предмета закупки, а также
— пункта 21 Порядка организации закупочного процесса, утверждённого постановлением Правительства Республики Армения № 526-Н, который предоставляет Заказчику право установить условие о представлении гарантийного письма от производителя или его представителя на этапе исполнения договора

.Согласно статье 13, пункту 3 Закона РА «О закупках» (далее также — Закон):

Исходя из характеристики предмета закупки, их характеристика включает в себя по возможности четкое описание условий, связанных с качеством, стандартом, безопасностью, условными знаками, терминологией, упаковкой, разгрузкой, размерами, конструкциями, а также другими характеристиками предмета закупки, основанными на международных стандартах и нормативно-технических документах, действующих в Республике Армения стандартах, а при их отсутствии - временных технических условиях.

Согласно пункту 21 Порядка организации процесса закупок (далее – Порядок), утвержденного постановлением Правительства Республики Армения № 526-Н:

Если иное не предусмотрено графиком организации закупочных процессов, то в течение двадцати рабочих дней, следующих за датой возникновения потребности в закупке, ответственное подразделение:

1. составляет и утверждает заявку на закупку, которая включает:
   а. технические характеристики предмета закупки.
   В случае закупки товаров указывается также необходимость представления участником информации о товарном знаке, фирменном наименовании, модели и производителе предлагаемого товара, а также необходимость предоставления на этапе исполнения договора гарантийного письма от производителя товара или его представителя либо сертификата соответствия, если это применимо для конкретного товара.

При этом на этапе исполнения договора не требуется сертификат страны происхождения от участника, заключившего договор.

Отметим, что предметом закупки, определённым в извещении о процедуре, являются химические вещества и принадлежности, предназначенные для лабораторной диагностики.

Кроме того, согласно пункту 1 части 1 статьи 3 Закона «О закупках»:
Целью настоящего Закона является обеспечение ценности в обмен на вознаграждение в процессе закупок, а именно:

1. приобретение товаров, работ и услуг, соответствующих потребностям, необходимых для выполнения полномочий, возложенных на заказчика, с адекватным вознаграждением.

Согласно части 1 статьи 7 того же Закона:
Любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право участвовать в закупочной процедуре.

Учитывая вышеизложенное, считаем, что:

1. Для приобретения товаров надлежащего качества и безопасных в использовании, соответствующих потребностям, необходимых для выполнения полномочий, возложенных на Заказчика, последний самостоятельно определяет и соответственно составляет техническое задание на предмет закупки в соответствии с требованиями законодательства о закупках.
2. В случае закупки товаров право применения требования о предоставлении на этапе исполнения договора гарантийного письма от производителя товара или его представителя предусмотрено законодательством о закупках и не несёт в себе каких-либо коррупционных рисков.
3. Данное требование обеспечивает качество и безопасность товара в соответствии с пунктом 3 статьи 13 Закона, вне зависимости от того, кто является производителем товара, поскольку в данном случае производитель может гарантировать качество и безопасность товара при соблюдении необходимых условий хранения, транспортировки и других обязательных требований.
4. Наличие у какого-либо производителя товара одного или нескольких представителей на территории Республики Армения не ограничивает участие возможных участников в процедурах закупок согласно законодательству о закупках.
   Возможным участником является любое лицо, независимо от того, является ли

оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, которое может соответствовать минимальным требованиям, установленным в извещении о процедуре, и требование о предоставлении на этапе исполнения договора гарантийного письма от производителя или его представителя является одним из условий приглашения к участию в процедуре.

5. Факт наличия у какого-либо производителя одного представителя на территории Республики Армения не ограничивает право Заказчика использовать товар или товары безопасно и в соответствии с назначением.
6. В приглашении также оговаривается, что в случае закупки товаров комиссия по оценке процедуры также оценивает соответствие полного описания представленных товаров требованиям приглашения..

За дополнительной информацией относительно данного объявления обращайтесь к координатору по закупкам Мэри Карапетян. Телефон: 011 621 000 (249)

Электронная почта: marketinysmu5@gmail.com

Оценочная комиссия по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/15-6-ԵՊԲՀ»

Комиссия

Председатель: _____ А. Акопян

Участники: _____ К.Мкртчян

_____ Г.Саргсян

Секретарь: _____ М. Карапетян